

A GOOD  
ADVERTISING  
MEDIUM

# Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

Շ Ա Ք Ա Թ Ա Թ Ե Ր Թ

THE CITIZEN

THE ONLY  
ARMENIAN  
PAPER  
Published in  
California.

ՀԱՄԱՐ Ա. ԹԻԻ 6.

ՖԵԷՉՆՕ . ԲԱՆ . ՇԱՐԱԹ . ՍԵՊՏ . 20 . 1902

ԳԻՆ 5 ՍԷՆԹ

## Մայրս Վաղիս

—0—

Մայրս Վաղիս, Ձեր Նազանգարածնի կողմէ Ծե-  
րակոյտի համար որոշուած Ռամկավարականաց ընա-  
րելին իր 40 տարեկան անուանի փաստարան մ'է,  
առաջնակարգ պերճախօս մը ու զարգացած գրագէտ  
մը, որոյ համարը Նազանգէս զուրա ալ տարածուած  
է ըստ բաւականին: Վաղիս, որոյ մէկ գեղեցիկ նամակը  
երեցու լրագրոյս հրդ թուին մէջ՝ Հայոց վրայ մաս-  
նաւոր սէր մը ու համակրանք մը տածող անձնուարու-  
թիւն մ'է, որ բնաւ աւելի մը փախցուցած չէ մեր  
իրաւունքները պաշտպանել անիրաւ յարձակողներու  
առջև: Վաղիս իր նախնական կրթութիւնը տուած է  
Պէթէլ վարժարանին մէջ ի Րըսըլի, Քէնթփի: Երբ  
20 տարեկան էր Քըմպըրլէնս Համալսարանի օրէնա-  
գիտական վարժարանէն ընթացուարաւ եղաւ: Իր  
հրապարակագիր և լրագրի մը թղթակիցը ճամբորդած  
է Միսսիսիպի Նազանգներու ամեն կողմերը, և այսու  
ստացած է այն խորին հմտութիւնը ու ծանօթու-  
թիւնները որոնք արիչ կերպիւ մարդ չի կրնար ամ-  
բարել:

Իր ատենախօս՝ Վաղիս մեծ համբաւ չափած է  
այս Նազանգի մէջ ինչպէս նաև Քալիֆորնիայի  
զուրա, տեղական թերթերու մէջ գրող ծանօթ անձնու-  
արութիւն մը զայն բաղկատուած է Ալաբամիոսի, Սըր  
Ռիլիքմ Կորիէի, Կրօսաթիթի և ուրիշներու հետ՝ սա  
եղբակացութեամբ թէ Վաղիս բաւերու և արտայայ-  
տութիւններու անհատնում հարատուութիւն ու պաշար  
մ'ունի, որոն չառ քիչեր միայն կրցած են անհանաւ:  
Այս մասնաւոր հրապարակագիրը իր երջանկութեան  
յայտը գրուել կը դնէ ըսելով թէ ինք չի կարծեր  
բնաւ թէ Տիմոթէնէս իր վերջի օրերուն մէջ խի  
իր ատենախօս կրնար բաղկատուութեան գրուել այս  
ճարտասանին հետ, որոյ խօսելու բնական յարմա-  
րութիւնը և արուեստը իրեն մանկութեան հետ տնած  
ու կատարելութեան հասած են:

Վաղիս վարած է զանազան պաշտօններ, և միշտ  
գոհացում տուած է ժողովրդին ու իր բարձրագոյն  
պաշտօնէից իր արդարադաս մարդ: Ար հաւատայ և  
պէտք կզգայ շատ մը նազանգային, օրինական և ներ-  
քին բարեփոխութեանց, որոց համար մեր էջեր չեն  
ներեր մանրամասնարար գրել: Քսան վեցերորդ նազան-  
գարածնէն, որ այս գաւառի մէջ կը գտնուի, Վաղիսէ  
յարմար, կարող և վստահելի Ծերակուտական մը կա-

րելի չէ գտնել ու ընտրել: Անոր ձայնը Ծերակոյ-  
տին մէջ իրեն յատուկ ոյթն ու կշիռը պիտի կրնայ  
ուեննալ: Թէև ինք սկզբունքով Ռամկավարական, բայց  
կը կարծուի թէ շատ Հանրապետականներ, իրենց  
նեղ նկատումները վեղիզի դնելով այս փաստարանին  
պիտի տան իրենց քուէները Սաքրամէնթոյի Ծե-  
րակոյտին մէջ ազդեցիկ, արդարախօհ ու անշահա-  
խնդիր ներկայացուցիչ մը ունենալու համար:

Հայոց քուէն կը յուսանք թէ Հայոց մէկ բարեկամը  
ընտրելու համար արժանավայել կերպիւ կը գործած-  
ուի Նոյեմբերի 4ի ընտրութեան ատեն:

---0---

## Բ. Տ. Չիթթընտըն

—0—

Տեղական թերթերէ մին նախնական ընտրու-  
թիւններէ վերջ խօսելով Բ. Տ. Չիթթընտընի մասին  
իրաւամբ կըսէր թէ "Ռամկավարականներու Ընդհ.  
Ժողովը արժանի է շնորհաւորութեան՝ այս վստահե-  
լի երիտասարդը Փըպլիք Ատմինիսթրէյթըրի ընտ-  
րելի որոշելուն համար: Բ. Տ. Չիթթընտըն ամեն տե-  
սակէտներէ նայելով արժանուարագոյն և յարմարա-  
զոյն անձն է այս պաշտօնին, և բնաւ տարակրօյս չու-  
նինք թէ անոր ընտրելի որոշուելուն պիտի յաջողէ  
անոր վերջնական ընտրութիւնը Նոյեմբերի 4ին": Եւ  
իրապէս Չիթթընտըն մին է այն զործուենայ և ուղ-  
ղամիտ երիտասարդներէն որոնց համար ժողովուրդը  
կրնայ վստահ ըլլալ և կանչել զանոնք կարեւոր պաշ-  
տօններու:

"Պայ" Չիթթընտընի անհատական արժանիքը Վա-  
ւառիս մէկ ծայրէն մինչև միւսը քաջամանօթ է հա-  
տարակութեան: Իր վայելած այս ժողովրդականու-  
թիւնը իրաւունք կուտայ իր մրցակցին անգամ խոր-  
հել թէ մեր յաջորդ Փըպլիք Ատմինիսթրէյթըրը  
Չիթթընտընը պիտի ըլլայ: Գործաւորաց կուտակու-  
թիւնէն, Արզիլականներէ ինչպէս նաև Հանրապետա-  
կաններէ շատեր իրենց քուէները պիտի միացնեն զայն  
ընտրելու համար:

Չիթթընտըն Փորթըր Պրատրսի Փաքինկ Հալզին  
մէջ կարեւոր պաշտօն մը կը վարէ այժմ, և իր այդ  
պաշտօնի բերմամբ ծանօթացած է բազմաթիւ Հայե-  
րու, որոց ամենն ալ գովեստով կը խօսին երիտասարդ  
ընտրելի մասին ու կը յանձնարարեն լրագրոյս մի-  
ջնաւ բոլոր Հայ Քաղաքացիներուն որ ընտրութեան

օրը իրենց քուէները այս համակրելի երիտասարդին տան և օգնեն իրեն որ ընտրուի այդ պաշտօնին ու պատահութիւն ունենայ իր համակրանքը աւելի ընդարձակ սահմանի մը մէջ ցոյց տալ Հայ տարրին՝ խզճի մտօք ու արդարութեամբ կատարելով այդ կարևոր պաշտօնը որուն կը ձգտի այսօր:

Պատճառ չունինք տարակուսելու թէ Հայք պիտի գիտնան վարձով գնահատել իրենց բարեկամներու արժանիքը և անոնց համակրութիւնը վայելել շարունակ:

## ՉԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ

—Քաղաքիս Գպրոցներու Վարչութիւնը, որ մեր Գրադարանի շէնքը վարձու կուզէր դարձեալ իրր վարժարան գործածելու համար, անցեալ Երկուշաբթի առտու՝ առանց Գործադիր Ժողովոյ պատասխանին սպասելու, շէնքին բանալին ձեռք ձգած ու զայն բանալով աշակերտներն սկսած է ընդունիլ՝ մտածելով ի հարկէ թէ Գրադարանի Միութիւնը չի պիտի ուզեր մերժել Վարչութեան խնդիրը՝ երբ մանաւանդ շէնքը պիտի գործածուէր գպրոցի համար, ուր բազմաթիւ Հայ տղաք պիտի ուսանէին: Այս ի հարկէ յանդուգն քայլ մ'էր, և շէնք գիտեր թէ Միութիւնը ինչ ընել պիտի ուզէ այս մասին՝ թէ և անդամոց մեծամասնութիւնը հաւանութիւն ունեցած ըլլալ կը թուի շէնքը վարձու տալ մինչև տարեկուսի միայն, մինչդեռ Վարչութիւնը նպատակ ունի գործածել զայն մինչև յառաջիկայ ամսո:

—Յովհաննէս Եալճեան, որուն դէմ Բիւրօպիքերն օգնական խմբակիրներէն՝ Պաքմըն կծու յօդուած մը գրած էր քանի մը շաբաթ առաջ՝ Ֆրէզնոյի տաքին ու փոշին նկատամամբ, և որոյ մէջ յօդուածագիրը բուն խնդիրը թողով անհաստիան կարգ մը կծու ակնարկութիւններ ալ ըրած էր մեր Ըսթաքթընի հայրենակցին — ընդարձակ նամակաւ մը պատասխանած է Բիւրօպիքերնի աշխատակցի յօդուածին՝ Ըսթաքթընի Տէյլի Բէքօրա թերթի անցեալ շաբաթ աւուր թուին մէջ: Եալճեանի պատասխանը ասորքմտօք կարգացուելիք գրութիւն մըն է բազմաթիւ սրախօսութիւններով համեմուած, և որ շատ տեղ ալ խիստ կծու ակնարկութիւններ ու ծանր քծակումներ կը տեղայ Բիւրօպիքերնի աշխատակցի հասցէին: Չայն կանուանէ յիմար, կը նմանցնէ շան, կը կոչէ ստախօսներու պէտ և «գորս դու պատուիրեցիր»:

Գաղափար մը սալու համար Եալճեանի նամակին վրայ՝ փոքր քաղուած մը ընենք:

«Կըստպատեալ (Պաքմըն) նեղը դնել զիս եթէ օր մը Ֆրէզօ դառնամ: Այդ բանը կակնկալեմ, բայց սապէս թոսէ շինուած ձեռք մը հանգերձներ պիտի պատրաստեմ՝ ինքզինքս պաշտպանելու համար կծող կինդանիներու դէմ: Հասարակ շունկրէ չեմ վախնար ես, սրով հետե տարններ սպրած եմ ի Կոտսանդնուս (պօլիս): «Ըսթաքթընի յիմարանոցին մէջ խենթ մը

կար, որուն հիւանդութիւնն էր կարծել թէ ինքը Փականինին էր, և կրնար ո՛ր և է եղանակ նուազել մէկ թելի մը վրայ, բայց չէի գիտեր թէ այդ յիմարը ազատ արձակուած ու Ֆրէզնօ փոխած էր»: Պ. Յ. Եալճեան իր նամակը կը կնքէ քանի մը խրատներ տալով Բիւրօպիքերնի աշխատակցին, և կը կարծէ թէ օր մը բաղդ պիտի տնենայ Ըսթաքթընի յիմարանոցին մէջ տեսնել դէմքը այն մարդուն որ երևակայական եղանակներ կը նուազէ երևակայական թելի մը վրայ:

Տարակոյս չի կայ թէ Պաքմըն պիտի պատասխանէ Եալճեանի նամակին, բայց ցաւալին այն է թէ Բիւրօպիքերնի ընթերցողները երկու կողմն ալ լսելու պատահութիւնը պիտի չունենան՝ գաղափար մը կազմելու համար երկու վիճարանողներու կարողութեան ու փաստերու մասին:

—Ամսոյս վերջերը քաղաքիս Բարձրագոյն Ասենին երկրորդ բաժնին մէջ՝ դասաւոր Չըրչի ասջև տեղի պիտի ունենայ Տքթ. Բարսեղեանի և Տ. Յարութիւն Լժտէրեանի մէկ դասը որ սկսած էր անցեալ Փետր. ամսոյ վերջերը: Տքթ. Բարսեղեան այս դասի պահանջատէրն է, որ 1035 տղար և 35 սէնթ կը պահանջէ Յ. Լժտէրեանէ իբր բժշկական վարձք և դեղի դրամ՝ զորս մատակարարած է եղեր անոր օրդուոյն՝ հանգուցեալ Միհրան Լժտէրեանի՝ այս վերջնոյ երկարատե հիւանդութեան միջոցին, որ անոր մահուամբ վերջացաւ 1901 Յուլիս 16ին:

—Պ. Պ. Լեթմէքճեանի 8 տարեկան դուստրը՝ Սերսնոյ ի ծնէ կոր սրունգներ ունեցող ազլիկ մըն էր, որ քաղած ժամանակ հաճելի երևոյթ մը չէր կրնար ունենալ. Հայրը քանի մը ամիսներ առաջ Սան Ֆրանսիսկօ տարաւ զինքը ու յանձնեց անուանի հիւանդանոցի մը որ պղտիկին սրունգները շակնէ: Հոն՝ երկար տեսն բժշկներու և անգամարոյժներու ինամոց տակ դարմանուելէ յետոյ՝ Սիրսնոյ բոլորովին սպաքինած ու սրունգները շակուած Ֆրէզնօ եկաւ անցեալներն ի մեծ միթիթարութիւն իր ազգականոց: Սիրսնոյը տեսնող օտարական մը բնու չի կրնար տարակուսիլ թէ դարմանուելէ առաջ նա պակասութիւն մը ունի եղեր:

—Տքթ. Լօնկ, Հայ զինուորական բժիշկը, որ Աւթաթրաս կղզիի գօրանոցին մէջ կը պաշտօնավարէ և ուր կը բնակի իր ընտանեօք հանգերձ, քաղաքս այցելած է, և մտադիր է ամիսի մը չափ ժամանակ մեր մէջ անցունել:

—Անցեալ Հիգշարթի գիշեր քաղաքս հասաւ Որ. Ագապի Քիպարեան որուն Պօլսէ մեկնած ըլլալը ծանուցուած էր արդէն: Որիորդը Պօլսէն մեկնած էր Սէրիֆօս անուն շոկենաւով, որ Ճիպրաթարի ասջև ժառի մը զարնուած ու ծակած է եղեր վասնզաւոր կերպով: Կաւապետը անմիջապէս նաւակները ծով իջեցնելով ճամբորդները անոնց մէջ փոխադրել տուած է, ուր մնացած են ամբողջ գիշեր մը առ ու գողի մէջ: Հետեկալ օրը ասոնք Ճիպրաթար բերուած են, ուր շաբաթ մը սպասելէ վերջ տարբեր շոկենաւով մը ճամ-

բայ ելած են դեպի Նիւ Եղբ:

—Այսօր տեղի կունենայ Պ. Ծովիկեանի հսկողութեան ներքեւ՝ Աստուր Միքայէլեանի խանութի ապրանքներուն ածուրդով վաճառումը նոյն խանութին մէջ, Քէյ փողոցին վրայ: Աճուրդը կը սկսի առաւօտեամբ 10ին:

—Այս երեկոյ ժամը ութին քաղաքիս հասարակաց պարտիզին մէջ Հասարակապետականաց Կեդրոնական Յանձն սխմբի կողմէ նուագաշանդէս մը պիտի արուռի, և այս սոթիւ հանրապետական ընտրելիներէն քանինք պիտի խօսին ժողովրդեան օրուան տաք խնդիրներուն վրայ: Ժողովին պիտի նախագահէ Վ. Վ. Ֆիլիփս, իսկ Ֆրանք Հ. Եօթ զլիսուոր ստեղծուած պիտի ըլլայ: Քսանէ աւելի անձինք զեր Նախագահ ընտրուած են այս ժողովին, որոց մէջ կան երկու հայ հանրապետականներ՝ Տիարք Յ. Մ. Սերբրեան և Հ. Մարգարեան:

—Տիկին և Յովհաննէս Քրաչճեան մանչ զաւակ մը ունեցան անցեալ Զորեքարթի օր:

—Սեպտեմբեր 7ին Կարապետ և Տիկին Ալջուճեան մանչ զաւակ մը ունեցան:

—Ոստիկեան եղբայր նոր գնած 80 արատվար այգիի գինը փոխանակ 26 հազար տղարի 16 հազար ըսուած էր սխալմամբ մեր պերճներ թերթին մէջ:

—Անցեալ Եարթ երեկոյ Առաքելեան Եղբայր խանութը գողեր մասած ու եօթը տարձանակ և քանի մը սուրս ուլ գրամ տարած են:

—Այս երեկոյ տեղի պիտի ունենայ նշանադրութեան հանդէսը Մ. Գարակեավորեանի ընդ Օր. Հ. Կիրիթեանի որ վերջերս Ֆրէզնօ հասած էր Տիկին Լնքապապեանի հետ:

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻ

Յառաջիկայ Կիրակի, 21 Սեպտեմբեր, Ծնունդ Ա. Աստուածածանի, և Բարեկենդան Ս. Խաչի: Ազգային Եկեղեցւոյ մէջ Ժամերգութիւնք կ'սկսին ժամը 9.30ին:

Քարոզի ժամն 11. Նիւթն է «Յարգենք ճշմարտութիւնը»:

Երեկոյեան ժամը 3ին կ'սկսի կիրակնօրեայ գաղութն Նիւթն է «Ս. Հազարդութիւն»

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

— 0 —

—Զօրեղ նկարագրի տէր մարդիկ թշնամիներու չարախօսութիւններով աւելի կը ճանչցուին քան բարեկամներու զովհոսներով:

—Մեծ մարդիկ չեն պարծենար, այլ կը թողուն պարծանքը անոնց որք մեծ մարդ ըլլալ կարծել կուզեն:

—Մեծ բան է սուր յիշողութիւն ունենալ, բայց երբեմն մոռնարու կարողութիւնը մեծութեան անկատկածելի նշանն է մարդու մէջ:

Բըսար Սէյճ ըսած է՝

—Անկախ եղիր ամեն պարագայի տակ:

—Դրամի յարգը գիտցիր: Հուստտա թէ արդարութեամբ շահուած դրամը քու արժանիքիդ մէկ արձանը կրնայ սեպուիլ մարդոց աչքին:

—Նախանձատ եղիր քաղաքական իրաւանցող: Հանրային գործոց մէջ անտարբեր մի մնար, բայց թող մի տար որ քաղաքականութիւնը քու անհատական գործոցդ ու պարտականութեանցդ արգելք ըլլայ: Գիտցիր որ կառավարութիւնը անհատներէ բաղկացեալ է:

—Մաքուր և կոկիկ եղիր միշտ: Մի ըներ այն բանը որուն վրայ մօրդ խօսիլ կամչնաս:

—Բազդախօսդէ հեռու կեցիր միշտ:

—Չափ ու սահման գծէ զուարճութեանց համար:

—Ինչ գործով կը զբաղուի, Մարկոս աղբար:

—Հուսարուծութեամբ:

—Հուերդ շարունակ հաւիթ կ'ածեն:

—Այո՛, տարուան չորս եղանակներուն ալ առատ ու թարմ հաւիթ ունիմ:

—Կը խնդրեմ ի՞նչ կրնէք որ ձեր հաւերը ձմեռը չեն զաղրիւր ածելէ. խի՞ններս կարծես թէ լրագիր կը կարգան, մինչև որ հաւիթին հասար մէկ սէնթի չիջնէ ամէլ չեն սկսիր:

—Գեղ սուրու ես անոնց. ես շարունակ հաւերդ անուն փոշիէն կը կերցնեմ՝ անոնց՝ իրենց հատիկներուն հետ, և յաջողած եմ ձմրան մէջ անգամ առատ հաւիթ ծախել:

—Այդ զեղէն գործածած եմ անգամ մը տարիներ առաջ և ուխտած եմ ուրիշ անգամ մըն ալ չի փորձել զայն: Օրին մէկը մանրավաճառս իրասաց զիս որ սնտուկ մը գնեմ անկէ ու գործածեմ հաւերու համար: Երբ զեղը տուն տարի՛ տեսայ որ սնտուկին վրայ կարգ մը բաներ գրուած էին: Ուշադրութիւնս գրուեց մէկ նախադասութիւնը որ կըսէր թէ փոշին կարելի էր գործածել ամեն կենդանիներու վրայ: Մտածեցի թէ իմ կովս մեծ պէտք ուներ այդպիսի դեղի մը, և զրեթէ բոլորը ոնոր սուրի: Միւս առաւօտ երբ ախոռ գնացի՛ ի՞նչ կը խորհիս թէ գտայ հոն: Կովը այնպիսի հաւիթ մը ածեր էր որ եթէ անոր վրայսիսէի սխալմամբ կօշիկներս կը կորսուէին անշուշտ:

Գեռատի աղջիկը— Բարեկամուհիս մէկը վերջերս նշանուեցաւ երիտասարդի մը հետ, որ հիմայ միտքը փոխած է ու կը մերժէ ամուսնանալ անոր հետ. ի՞նչ խորհուրդ կուտաք ընել այս մասին:

Փաստարանը — Երիտասարդը հարո՞ւստ է Դ. ա. — Ոչ. սէնթ մ'անգամ չունի կըսեն:

Փաս.— Կը խրճտեմ որ շնորհակալութեան նամակ մը գրուի երիտասարդին

—Եթէ մաքսատան պաշտօնեաներուն կաշառք տալու ըլլատ տուգանքի չե՞ս ենթարկուիր:

—Վստահ չեմ այդ մասին. բայց սա գիտեմ փորձով որ եթէ կաշառք տալ մերժես տուգանքի մը կեթարկուի անշուշտ:

Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

ՇԱՐԿԱԹԱԹԵՐԹ

Կը հրատարակուի ամեն Շարաթ օրեր ի թիւ 1033

ՃէՅ Փողոց, Էքսփրէսի Շէնքին մէջ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ, ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու և Քանադայի համար  
Տարեկան մէկ ու կէս ՏՈՒ. — Վեցամսեայ 75 Սէնթ

Ուրիշ երկիրներու համար

Տարեկան 10 Ֆրանկ — — Վեցամսեայ 5 Ֆրանկ  
Բաժանորդագիրը կանխիկ վճարելի է միշտ

Նամակ, ծրար կամ դրամ կը զրկուին Խմբագրու-  
թեան հետեւեալ հասցէիւ՝

To The Editor of

THE CITIZEN

P. O. Box 1224

Fresno, Cal.

THE CITIZEN

The Only Armenian Paper Published in the State of  
California.

H. EQUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET

FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year.....\$1 50 | Six Months.....75 Cents

ՅՐԷՁՆՕ. ՔԱՒՅՕՐԷՒԱ. ՍԵՊՏ. 20, 1902

ԱՆՇԱՐԺ ԿԱՂՈՒԱԾ ԳՆԵՆՈՒ Է

— 0 —

Այգեկութիւնը լմնցաւ: Այգեգործի տարուան աշխա-  
տութեան արդիւնքը տախտակներու վրայ փռած՝ բաց  
երկինքին տակ՝ արևի առջև զրուած կը մնայ: Անոր  
աչքերը հոգեկոյնը կը դիտեն ստէպ՝ առանելու թէ  
արգեօք անձրև սպասնացող ամպի մը կտոր կերևի  
հոն: Անոր աղօթքը ուրիշ բան մը չէ հիմայ՝ եթէ  
ոչ խնդիր մը երկնից որ քանի մը շարաթներ ևս  
չանձրևէ ու թող տայ արևին՝ առանց արգելքի՝ խա-  
ղաղները շամիչի վերածել:

Սակայն Հայ վարձկան այգեգործները աշնան  
այս օրերուն մէջ ուրիշ մտատունջութիւն մ'ալ ունին:  
Առնց այն գաստիարդը որ ստիպուած է իր անցեալ  
տարի մշակած այգին թողուլ, կը պատրաստուի նոր  
սեղ մը վարձելու ելնել: Աժան ու շահաւոր երկիր մը  
ձեռք ձգելու խորհուրդը անձրևի մը փոսնային շափ  
սրտնեղիչ թերևս՝ կըստիպէ՝ զայն քարէ քար գարնուի,  
չատ մը անպատեհութեանց պատճառ գտնուել ու շատ  
անգամ խարէութեանց զոհ ըլլալ՝ ենթարկուած միա-  
լով սակայն անտայգ ու փոփոխական վիճակի մը միշտ:  
Կան տանց մէջ շատեր արդարև որք բաւականա-

չափ դրամագրուի չունենալով՝ իբր սկզբնակներ  
ստիպուած են շարունակել այս ընթացքը. բայց կան  
շատեր այ օրոնց բնաւ ներքի չէ վարձկանութեան  
մէջ մնաուել իրենց վարձատրութիւնն ու աշխատու-  
թեան արդիւնքը որ շատ անգամ կալուածատիրոջ  
քսակին մէջ կը լեցուի: Երկու գիտաւոր ու խա-  
րուսիկ պատճառներ կան որք այսպիսիները կարգի-  
լեն իրենց ներկայ կացութիւնը փոխել աւելի վատա-  
հելի ու անվտանգ վիճակի մը հետ: Առաջին պատ-  
ճառը ազաւթութիւնն է — եթէ ներքի է այս բառը  
գործածել — և կամ շուտ հարստանալու պենչը որ ընդ-  
հանրապէս անյոյժութեամբ կը վերջանայ: Այն վարձ-  
կանը որ հարկեր արտաւարնաց այգի մը վարձելու  
կարողութիւնը ունի, հազիւ պիտի կրնայ 20 արտա-  
վար այգի մը գնելու գրեց մէջ ըլլալ, և որովհետև  
այդ փոքր սեղէն չի կրնար այնչափ շահ ակնկալել  
որչափ կապուտ աւելի ընդարձակ երկրէ մը, ուստի  
լուազոյն կը սեպէ մեծ և ընդարձակ գործերու մէջ  
ըլլալ՝ փոխանակ փոքրազոյն երկրի մը կապուելու, որուն  
եկամուար ի հնարիչ երկրի մեծութեան համեմատու-  
թեամբ կըրնայ ըլլալ: Անտարբերութիւնը երկրորդ  
պատճառն է որ շատերը պահած է իրենց ներկայ վի-  
ճակին մէջ: "Ինչին է պէտք նեղութեան մէջ մտնել  
ու պղտիկ երկրի մը հետ կապուել, կըսեն այնպիսիք,  
ուզած սեղս կը վարձեմ. և եթէ տոգոհ ըլլամ"՝ յա-  
ջորդ շարին ուրիշ սեղ մը կը փորձեմ": Քանի մը տարի-  
ներ առաջ Ֆրէզնոյի գրեթէ բոլոր այգեպանները այս  
գաղափարին կը ծառայէին, և բացի մի քանի անձե-  
րէ ոչ որ մտածած էր և կամ կը մտածէր իսկ երկի-  
րը գնել փոխանակ անոր վարձկանը ըլլալու: Թերևս  
շատեր կը խորհէին թէ Հայոց համար արգելեալ էր  
կալուածատէր գտնուել, թէև երկրի մշակներն էին  
անոնք. իրենց քրտինքով կուտուէր այն ու կը պաղա-  
բերէր, և ուրիշ ամեն գաստիարդներէ աւելի իրաւ-  
ունք ունէին անոր սերերը գտնուել: Սակայն երեք  
չորս տարիներ առաջ, երբ Հայ կալուածատէրներու  
թիւը մասնաբաժնու վրայ կարելի էր համբել, սկսեցին շա-  
տեր քիչ մը հեռուները նայիլ և կալուածատէրներու  
յաջողութեան պատճառները մնաուել, զորս կարելի  
էր գտնել անոնց սեպհական այգիներուն մէջ միայն:  
Այդ օրերին սկսեալ շատեր սկսեցին նոր ուղղութեան  
մը հետևիլ՝ գնել երկիրը փոխանակ գայն վարձու  
տանելու: Փորձերը յաջող եղան, ու Հայ կալուածատէր-  
ներու թիւը սկսեց զգալապէս բարձրանալ, անանկ որ  
Յոյսօր վեր ի վերոյ հաշիւ կըլլայ թէ մեր ազգայինք  
վեց հազար արտաւարէ աւելի այգի և ցորենի եր-  
կիր ունին այս գուտուի մէջ, որ շատերու նախանձը  
շարժելու շափ նշանակութիւն ունեցող գորութիւն մը  
է փնքնիւն: Եւ դիտելի է թէ այս կարեւոր քայլը առ-  
նողներուն մէջ գեա գտնուած չէ մէկը որ իր նախկին  
վիճակին փափաքած ըլլայ, կամ քաջալերէ իր բարե-  
կամը վայրկեան մը իսկ վարձկան մնալ, որ ուրիշ  
բան մը չի նշանակել եթէ ոչ ուրիշի մը շահուն հա-  
մար աշխատիլ՝ կիզիչ արևին կամ սեպտատարափ անձ-  
րևին ներքև:

Մեր այն Հայրենակիցները որոնք տակաւին կը խորհին թէ վարձկան ըլլալու մէջ մեծ պատեհութիւններ կան, պարտին պահ մը մօտիկ անցելոյն պատմութիւնը մտարեւելի, վնասուել և տեսնել թէ քանի վարձկան կարելի է գտնել Յրէզնոյի մէջ որք կարուածատէրէ մը աւելի յաջողած ու լուսագոյն վիճակ մը ունեցած ըլլան: Հաստատուն եկամուտ մը, հոգ չէ որչափ ալ պղտիկ ըլլայ, պատահական մեծ գումարէ մը շատ աւելի նախապատիւ է և վստահելի: Տարեկան հարիւր տողարի ապահով եկամուտ մը քանի մը տարիներու մէջ քանիցս ձեռք ձգուած քանի մը հարիւրներէն աւելի դրական է և ապահով:

Մեր անձուկ էջերը չին ներքը առայժմ աւելի ընդարձակ գրել այս կարեւոր ու յոյժ շահեկան նիւթին վրայ: Թերեւս ուրիշ անգամ նորէն անդրադառնանք այս խնդրոյ և մատնանիշ ընենք վարձկանութեան անպատեհութիւնները, անակնկալ ու մեծ վնասներն և այն բոլոր մտահոգութիւնները որք երկրագործին սիրտը կը մաշեն չարունակ:

Այն այգեպանին որ բաւական կարողութիւն ունի կտոր մը երկրի տիրանալու՝ մեր խորհուրդն ու թելադրութիւնն է առաջին առիթէն օգտուիլ ու իր բաղդին տէրը դառնալ: Իսկ անոնց որ տակաւին պէտք ունին քիչ մը դրամ հաւաքելու կը մտղթենք որ կարողանան իրենց քրտանց հատիկները խնայողութեամբ սմբարել և օր մը կարուածատէր մը դառնալ:

Ամեն պարագայի տակ հողը զնէ, անոր տէրը եղիր, ազատէ աւելորդ մտադրանքներէ, որպէսզի միտքը հանդիստ՝ և դու կարող ըլլաս նիւթականէդ անդին աւելի բարձր բաներու վրայ մտածել և օգտակար ըլլալ:



ԱՐՁԱՆԱԴՐՈՒԷ


— 0 —

Քանիցս ըսուած է արդէն թէ այս սարուան Բնդ, ընտրութիւնները տեղի պիտի ունենան Նոյ. 4ի Երեքշաբթի օրը: Այս ընտրութեանց ատեն քուէ տալու իրաւունք ունին միայն այն քաղաքացիները որք օրինաց սրամտողութեան համեմատ իրենց անունը արձանագրել տուած են (Բէճիսթր ընել) ամսոյս 25էն առաջ: Մինչև այդ օր չարձանագրուող մարդիկ իրենց քուէները կը կորսնցնեն և քաղաքացիի մը ամենէ մեծ պարտականութիւններէն մին անկատար կը թողուն: Այս կէտ կը փախաքինք կրկին անգամ ապաւորել Հայ քաղաքացիներու մտքին վրայ և թելագրել որ Սեպ. 25է սուաջ փութան երթալ ու արձանագրուել իրենց թէ քաղաքացիութեան պարտքը կատարելու և թէ իբր Հայ քաղաքացի իրենց կարեւորութիւնը ու գորութիւնը զգալի ընելու համար հանրութեան առջև:

Եթէ մենք Հայերս այսպիսի հեշտ զէնք մը գործածելու չափ բաւական համարձակութիւն ու կարողութիւն չունինք մեր մէջ, հասպա ի՞նչպէս կարգարացներք մենք զմեզ կարծել թէ օր մը պիտի կարողանանք, երբ պատեհ առիթը ներկայանայ, ահաւոր զէնք

մը գործածել մեր դարաւոր թշնամիին զէմ իրաւունքնիս ձեռք բերելու համար:

Պղտիկին մէջ անհաւատարիմ մարդը մեծին հաւատարիմ չի կրնար ըլլալ: Արձանագրուէ և քուէ տուր անպատճառ:



Յառաջիկայ Երկուշաբթի օր տեղի կունենայ Չամիչի Բնկերութեան Բնդհանուր Ժողովը: Հայ այգեպաններէն անոնք որք անձամբ չեն կրնար ներկայ ըլլալ այս Ժողովին, իրենց կողմէ իրաւունք ունին ներկայացուցիչ մը խրկել: Այս մասին Վարչութիւնը դիւրութեան համար տպեալ փոխանորդագիրքեր զրկած է բոլոր անգամներուն՝ բացառելով միանգամայն թէ ի՞նչ կերպով պէտք է զանոնք ստորագրել ու զրկել վարչութեան հասցէին, և կամ յանձնել փոխանորդ կարգուած մարդուն, որով այս վերջինը իրաւունք պիտի ունենայ իրեն կողմէ քուէ տալ այդ օր: Ներկայ եղիր անձամբ կամ փոխանորդ մը զրկէ Երկուշաբթի օրուան Ժողովին:

Վերջի պահուս Չամիչի Բնկերութեան Վարչութիւնը հրատարակեց այն ամեն վտճառականներու անունները որոնք ընկերութեան պայմանագիրը ստորագրած են արդէն: Այս ցանկին մէջ են այն ամեն վտճառականներն որք հրապարակի վրայ կարեւորութիւն ու գնելու և վաճառելու դիւրութիւններ ունին: Յանկը կը սարունակէ քառասուն և ինը տուներու անուններ որոնց մէջ են բոլոր Հայ վտճառականները:



ՅՐԷՉՆՈՅԻ ՀԱՅ ԿՍՒՈՒԱԾԱՏԵՐԵՐԸ

(Շարունակութիւն)

57. Սարգիս Սաղաքեան	արտաւար այգի	40
58. Յակոբ Միրզոեան	— — —	20
59. Մեսրոպ Մինանեան	— — —	5
60. Յակոբ Նշիկեան	ցորենի երկիր	20
61. Պաղտասար Քիրէմիթեան	— — —	20
62. Ղազար Բոթիկեան	— — —	20
63. Ճիւլիս Սիմսըն	— — —	20
64. Աւետիք Ատպեան	— — —	20
65. Մելքոն Կարապետեան և Յ. Աւետիսեան	— — —	80
66. Յովակիմ Վարդանեան	— — —	40
67. Արամ Մարգարեան	նոր անկուած այգի	20
68. Տիգրան Յակոբեան	— — —	80
69. Յարութիւն Միրումեան	— — —	40
70. Ալեքսան Աւրանեան	— — —	40
" " " " " " " "	ցորենի երկիր	30
71. Գրիգոր Առաքելեան (նորէն)	— — —	20
72. Գաղանձեան Եղբարք	— — —	80

Հետեւեալները ուղղուած են

Յ. Էժտերեան	— — —	100
Ս. Ճիհանջահեան (ոչ Կ.)	— — —	40

(Շարունակելի)

### Զինուորին Հրատեչար

Մնա՛ք բարեաւ իմ սիրելիք,  
 Մնայ բարեաւ իմ տուն.  
 Բարեկամներ թող չի արամին.  
 Մայր, մ'արտասուէր և դուն:  
 Թէև կերթամ հիմայ,  
 Սիրտս մնայ քու քով,  
 Եթէ չի գառնամ ալ նորէն քեզի  
 Քեզ հետ կըլլամ հոգով:

Մայրիկ, մի լար՝ զիս համբուրէ,  
 Չեւքերդ զիր գլխիս,  
 Օրհնէ որդիդ զողորմ ձայնով.  
 Թեկերուզ մէջ առ զիս:  
 Թէև կերթամ. և այլն:

Հօր ձայն մ'է որ կանչէ զիս,  
 Իմ պարտքս է մեկնիլ.  
 Գուն ուսուցիր օրօրիդ հետ  
 Ազգիս համար մեռնիլ:  
 Թէև կերթամ հիմայ, ևն.

Սիրականս, աչացդ արցունք՝  
 Մարգարտի հատիկներ  
 Թող թափթփին իմ ծոցիս մէջ,  
 Թող ինձ ըլլան ընկեր:  
 Թէև կերթամ հիմայ, ևն.

Գու քաջ եղիր, գրկէ մէյ մ'ալ  
 Համբուրէ նորէն զիս.  
 Եկ որ վերջին անգամ ըլլայ  
 Սեղմեմ քեզ իմ սրտիս:  
 Թէև կերթամ հիմայ, ևն.

Իմ տեղ մօրս զաւակն եղիր՝  
 Օգնական քաջալեր,  
 Մխիթարէ զայն երբ գնամ.  
 Լեր անբաժան ընկեր:  
 Թէև կերթամ հիմայ, ևն.

Մնա՛ք բարեաւ, ուղ մ'արտասուէք,  
 Կը գառնամ գուցէ ձեզ.  
 Բայց թէ մեռնիմ վստահ եղիք  
 Ինկած եմ քաջի պէս:  
 Թէև կերթամ հիմայ, ևն.

Մնայ բարեաւ իմ Հայրենիք,  
 Մնայ բարեաւ իմ տուն.  
 Սիրականս, աչքդ սրէ.  
 Մայր, մ'արտասուէր և դուն:  
 Թէև կերթամ հիմայ,  
 Սիրտս՝ առնոց ձեր քով.  
 Եթէ չի գառնամ ալ նորէն ձեզի,  
 Չեզ հետ կըլլամ հոգով:

Հ. Է.

### Արևիկ Յ. Եանրգեան

( ՎԱԼԻ—ՍԱՅՔԼԻԲ )

ԹԻԻ 2114 ՅՐԷՋՆՕ ԸՍԹԻԹ, ԹԵԼԷՖՈՆ, ՈՒԱՑԹ 717  
 Կը վաճառէ ՏԷՑԹԸՆ անուն համբաւաւոր հեծել-  
 անիւր զիւրամատչելի պայմաններով :  
 ՄԱՍՆԱԳԷՏ Նորոգիչ ամէն տեսակ հեծելանիւի:  
 Գեռ ոչ մի յաճախորդ զժգոհ չէ մեկնած այս խա-  
 նութէն: Փորձ մը պիտի համոզէ Ձեզ:  
 Մասնաւոր ուշադրութիւն Հայ յաճախորդաց:

# Յ Ր Է Ջ Ն Օ

## ԼԸՄՊԸՐ ՔԸՄԲԸՆԻ

ԳՐԱՍԵՆԵԱԿ ՈՒ ՎԱՃԱՌԱՏԵՂՆ  
 ԱՅԿՎԷՆԹՈՒՐԱ ՓՈՂՈՅՆԵՐՈՒ ԱՆԿԻՒՆԸ  
 Թէլէֆօն — — — Մէյն 24  
 ՅՐԷՋՆՕ, ՔԱԼԻՖՕՐՆԻԱ.

### ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐՈՒՆ

Քաղաքացին ձեռքէ կը վաճառուի 3 Սէնթի միայն  
 Քալիֆորնիայէ դուրս ուրիշ ամեն քաղաքներու մէջ:  
 Մեր Գործակալներէն կը խնդրենք որ սակէ վերջ  
 այս պաշտալ գնով վաճառեն զայն:  
 —Աւելցած թերթերը առ այժմ մեզ վերադարձնելու  
 պէտք չկայ. այս մասին կը գրենք առանձին նա-  
 մակաւ:  
 —Ստակի փոխարէն նամակադրոշմ զրկելու չէ:  
 Հաշիւները երկու ամիսը մի անգամ զրկելու է մեզ.  
 ամեն շաբաթ դրամ զրկելու հարկ չի կայ:

### Լ Ա Ի Ա Գ Ո Յ Ն Գ Ա Ր Ե Ջ Ո Ւ Ր Ը

## ՅՐԷՋՆՈՅԻՆՆ Է

\*\* ՓՈՐՁԵՑԷՔ ԶԱՅՆ ԵՒ ՀԱՄՈՁՈՒԵՑԷՔ: \*\*

### ԱԸԹՐԸՆ ՓԸՍԻՑԻՔ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Եթէ թուրքիայէն Ամերիկա եկող բարեկամ մը  
 ունիս, կամ եթէ կը փափաքիս թուրքիա կամ այլ-  
 ուր երթալ, թիքէթի համար զիմէ Սըթրըն Փրսիֆիք  
 ընկերութեան օֆիսը: Ամերիկայի սեւէ մէկ կէտին  
 համար տամ կը վաճառէ միւսայն ընկերութիւնը: Ա-  
 լելի տեղեկութեանց համար զիմել առ  
 Ճ. Ֆ. ՀԻՔՍԸՆ Թ. Ֆ. ՊՐՕՄՆՀԱՆ  
 Տիվիթըն Փասինճըր Էյճընթ: ՍԻԹԻ ԹԻՔԷԹ Էյճընթ  
 Քաղաքի գրասենեակը—Թիւ 1013 ՃԷՑ Փողոց,  
 Նոր Փաթըրսըն Պաքին առջև

ԱՐՏԱՒՈՅ ԿԱՐԳԻ ԺՈՂՈՎ

"Քալ. Բէյլին Կրօւըրս Ասօշիէշըն"ի Սեպտ 22ին:

— 0 —

Քալ. Բէյլին Կրօւըրս Ասօշիէշընի արտաքոյ կարգի մէկ ժողովն կանչուած է սեղի ունենալ Այնթապի Հօլի մէջ, Ի Ֆրէզնօ, Քալիֆօրնիա, Երկուշաբթի օր, Սեպտ. 22, 1902, առաւօտեան ժամը 10ին՝ Ընկերութեան 100,000 սոլար փոխ առնելու սահմանափակ իրաւասութիւնը 500,000 սոլարի՝ փոխելու նպատակաւ, բարեփոխելով Ներքին Կանոնադրութեան Կրգ յօդուածի Կրգ բաժինը՝ որ կարգացուի այսպէս:

Պարտք ընել և դրամ փոխ առնել Ընկերութեան նպատակին համար՝ ոչ աւելի քան 500,000 սոլարի հաւաքական գումարէ մը. տալ ո և է և ամեն պարտամուրհակ, պարտաթուղթ և ուրիշ պարտուց վկայագրեր: Գրաւ կամ ուրիշ կերպիւ Ընկերութեան ո և է մէկ ստացուածքը սպաւնաւորութիւն տալ՝ պայմանաւ որ այսպիսի պարտքերու պայմաններն ու գումարները վարիչներու ժողովի արձանագրութեանց մէջ գրուած ըլլան. պարտամուրհակը կամ Ընկերութեան պարտքը յոյց տուող ո և է պարտաւորագիր և այս առթիւ Նախագահի և ստանալագիր կողմէ, այդ անուամբ, ստորագրուած բոլոր սպաւնաւորներն Ընկերութեանս համար պարտաւորիչ պիտի ճանչցուին":

Քալ. Բէյլին Կրօւըրս Ասօշիէշըն

Ա. Լ. ՍԷՅԸՐ, Աստանագիր

GEORGE BROS.

ՀԱՅՈՒՍՏՆԵՐՈՒ, ԳԼԽԱՐԿԻ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՃԵՐՄԱԿԵՂԷՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՐՁԱԿՆԵՐ:

1109 ՃԷՑ Փողոց, — Ֆիւք Պլաք — Ֆրէզնօ. Թէլէֆօն — — — Ուայթ 711

Հասարակութիւնը վաղուց ի վեր փորձով գիտէ արդէն թէ այս խանութին մէջ ծախուած ամէն սպրանք իրենց տեսակներուն մէջ լաւագոյններն են, բայց շատ քիչը գիտեն թէ իրենց գիները՝ բողոքատար ուրիշներէ բնաւ տարբերութիւն չունին:

Կը փափաքինք որ անգամ մը փորձէք և վստահացնէք զուք զձեզ այս կարևոր կէտին համար. անկէ յետոյ ուրիշ սեղ չէք երթար գնել ինչ որ կարելի է ստանալ ճՕՐՃ ԵՂԲԱՅՐՆԵՐԷՆ:

Ս. Ա. ՇՈՒԱՅՁԸՐ

ՀԱՐՆԷՍ, ԹԱՄԲ, ՄՏՐԱԿ, ԾԱԾԿՈՑՆԵՐ, ԵՒՆ:

Ամեն տեսակ Նորագումներ կըլլան փութով:

1920 Մարտիտա Ըսթրիթ, Ֆրէզնօ:

ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐԵՆՔ

Վ. Մ. ՃԱՆՍԸՆ ԵՒ ԸՆԿ.

ԿԱՌՒԵՐՈՒ ՀԱՆԳՍՏԱՐԱՆ

Հարնէս, Մարակ և Ծածկոցներ: Այս դաշտի մէջ ամենաաժտան և ընդարձակ վաճառատունը 1817—1819 Թուրարի փողոց, Փօսթ Օֆիսին դիմացը:

Ճ. Մ. Սերրեան, Ճ. Պանըր, Յ. Մ. Սերրեան

Սան Ռօքիլի վայի Լյուս Քօ,

Ճ. ՊԱՆԸՐ, Վարիչ:

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒԱԾ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւ 954 ՃԷՑ Փողոց, Ֆրէզնօ, Քալիֆօրնիա: Թէլէֆօն, Մէյն 40

Եթէ կը փափաքիս գնել կամ ծախել մշակուած կամ անմշակ ամեն տեսակ կալուած՝ եկուր և մեզ տես թէ ինչ տեսակ առաջարկութիւններ կրնանք ներկայացնել քեզ: Ներկայացուցիչներն ենք շատ մը առաջնակարգ սպաւնաւորական ընկերութեանց, որոց համար ձեր գործերը կը խնդրենք:

DR. GAZARIAN DENTIST

Տրք. Յ. Ղազարեան,

Ա.Տ.Ա.ՄՆԱԳՈՐԾ ԵՒ Ա.Տ.Ա.ՄՆԱՐՈՑԺ

Չանս Պլաք, ԱՅ Ըսթրիթ, Ֆրէզնօ, Քալ.

Գահացուցիչ և առաջնակարգ գործ: Կատարեալ գործ

Հացում Յաճախորդներուն: Գիները միշտ չափաւոր:

Թէլէֆօն — — — — Ուայթ 231

ՍԵՐՈՒԲԵԱՆ ԵՂԲԱՐՔ

Ամենաբարձր գին կը վճարեն

ԹՈՒՁԻ, ԴԵՂՁԻ ՈՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ

ՉՈՐ ՊՏՈՒՂՆԵՐՈՒ:

ՖՐԷԶՆՕ ՄԱՔԱՐՕՆԻ ՖԱՔԹԸՐԻ

\*\*\* Ա. ՏԻԱՎՉՉԻՑ — ՏԷՐ \*\*\*

Սան Պէնիթօ փողոց, Այի մօտ: Ֆրէզնօ, Քալիֆ.

ԹՐԷՅՆԵՐ

100,000 Սև թուղթի թրէյլ կը ծախուին վարձու առնելէ շատ աժտան գներով:

Օրինակը տեսնելու կամ գնի համար գիմել Առ

ՃՕՆ ԿՐՈՒՄԷԹԹ.

Մատիւն և Պանըրիմիլիոցաւ 1144 ՃԷՅ Ըսթրիթ.

Ձեր Ապաշովադրութեան համար դիմեցէք առ

### Պ. Յ. Շիխիրյան և ընկ.

1123 ձեռք բերիք

Պաշտոնները փութով կը վճարուին: Յաճախորդք միշտ գոհացում կատանան:

Ձեր ԱՏԱԽՉՆԵՐԸ ԳՆԵՑԷՔ

# Ա. Ա. ՓԻՐՍ

ԱՏԱԽՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷՆ՝ ՓՐԷՉՆՑ ՔԱԼ.

ԹՐԷՅ ԹՈՒՂԹԻ

ԿԱՄ ԹՈՒՂԹ ԹՐԷՅԻ

ՀԱՄԱՐ ԳՆԱ

### Տօրսից Րապիևուրն Ընկ.

Ֆրէզնօ և ԱՅ Փողոցներու անկիւնը

Ը Ն Տ Ր Ա Կ Ա Ն Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

Փրայք Աամինրթրէյթրի համար

### Ր. Տ. Չիթրևուրն

Ռամկավարական կանոնաւոր ընտրելի: Ընտրութիւն. Նոյ. 4, 4902

ՏԲԹ. ԱՆՃԸՍ Պ. ՔՕՎԱՆ

ԳՕՐԾՆԸՐԻ ՀԱՄԱՐ

Ռամկավարականներու կանոնաւոր ընտրելի:

Գուտաական Գանձապետի (Քաղնթի Թրէժըրը) համար

### Ս. Վ. ՄԱՐՇԸԼԼ

Հասարակապետական կանոնաւոր ընտրելի

Ընտրութիւն՝ Երեքարթի, Նոյ. 4, 4902

Ճ Օ Ն Վ. Կ Ի Է Ր Հ Ա Ր Տ.

Հանրապետական Ընտրելի ՇԷՐԻՑԻ համար  
Ձեր օգնութիւնը կը խնդրուի յարգանքով:

Ընդհանուր Գատախաղի համար

### Ճ. Վ. ՃՕՆՍ

Հասարակապետականաց Ընտրելի

ՃԻՆԹՐՈԹ - ՊՕՐՏՐՈ ԸՆԿԵՐՈՒԹԻԻՆ

1815, 1821 ԹՈՒՂԱՐԻ ԸՍԹՐԻԹ

Մեծաքանակ վաճառականք Նափայի, Սընոմայի ևն. գիններու, սեղական և ներածեալ օղիներու:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԷՅՃԷՆԹՆԵՐ

Րիւմաթիզմի ապաշով գեղ ճանչցուած ՈՒԻԹԸՆԻ ՍԷՏԻՍԻՆԼ Ըուրերուն: —Թէլէֆօն, Ուայթ 817:—

ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ ԿՈՒՉՆԵՔ

Ամեն հայաբնակ քաղաքի մէջ Շարաթաթերթս տարածելու համար: Պայմանները շատ նպաստաւոր են: Գրել խմբագրութեան հասցէին:

### Քաւոյ Եղբայրներ

Կը ծանուցանեն թէ այս տարի ևս կակնկալեն ընդունիլ Հայ այգեպաններու արտադրած պտուղներն և՛ կը վստահացնեն թէ ամէն յաճախորդ գոհ պիտի մնայ այս ծանօթ տունէն:

J. K. ELIZIAN

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Նպարեղէններու, պտուղի, սեկարի, ծխախոտի, թէյի, սուրճի, պէյքիկի փավտըրի, ձիթաւղի ևն.

1145 ԱՅ փողոց —Ֆրէզնօ— Թէլէֆօն Պրայք 773

### Պարնօք Ըսթէյալլու,

Էլ և Ֆրէզնօ փողոցներ, Պարտիզին զիմացը Թէլէֆօն, մէյն 174 — — — — Ֆրէզնօ  
Վարձու կառքեր. ճամբորդներու ձիրտուն հագաւորութիւն: Գնել և ծախել: Բայր զիշերը բաց ենք:

ԹՐԷՅՉ ՓԷՅՓԸՐԻ ՀԱՄԱՐ

ՍԻՄԷՆԹՈՎ ՊԱՏԱԾ ԳԱՄԻ ՈՒ ՀԱՐՏՈՒԷՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱ ԱՌ

### ՊԱՐԻԷԹ ՀԻՔՍ ԸՆԿ.

1035-1041 ԱՅ ՓՈՂՈՅ ԹԷԼԷՖՅՈՆ

ՖՐԷՉՆՑ, ՔԱԼ Էքսչէնչ —Թիւ 2

ՏՊԱԳՐՈՒԹԻԻՆ

ՔԱՂԱՔՅԻԻ տպարանին մէջ կը տպուին ամեն տեսակ Հայերէն և Անգլիերէն գործեր՝ Այցետառ, նամակագրութիւն, պաշարան, հարսանեկան ծանուցաղիք և տեսարակներ. գոհացուցիչ գներով:

ԾԱԽՈՒ ԳՐՔԵՐ

Ամէն անոնք որ կը փափաքին վեճեալի տպուած որ և է զիրք սասանալ, կրնան զայն ձեռք բերել խմբագրութեան միջոցաւ, որ նոյն Միաբանութեան գործակալ կարգուած է: